

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ 

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2016 ԹՎԱԿԱՆ

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների ու պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն			<u>28.04.2017թ.</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	
Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		<u>28.04.2017թ.</u>	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	
Բագրատ Ճզմաչյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		<u>28.04.2017թ.</u>	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	
Կարեն Սարգսյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		<u>28.04.2017թ.</u>	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		<u>28.04.2017թ.</u>	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	
Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ		<u>28.04.2017թ.</u>	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	
Զարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ		<u>28.04.2017թ.</u>	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	
Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		<u>28.04.2017թ.</u>	
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)	

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏՔԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների 2016 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Էական տեղեկատվություն

2016 թվականին ՀՀ առևտրային բանկերի համար առկա էր կարևոր մարտահրավեր՝ 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի նվազագույն չափի 30 մլրդ. ՀՀ դրամի ապահովումը:

Նշված մարտահրավերի պայմաններում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը 2016 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու և փակ տեղաբաշխում իրականացնելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը 2016 թվականի նոյեմբերի 8-ին հաստատել է տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք էլ 2016 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել են, որից սկսած ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կապիտալը փաստացիորեն համալրվել է 8.5 մլրդ. ՀՀ դրամով՝ ապահովելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի պահանջը:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

Նշված հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել Բանկի 2016 թվականի ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը:

Նշված հաշվետվությունում ներառված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպելու ձևով միացման արդյունքները, քանի որ 2017թ.-ին ֆինանսական հաշվետվությունների կազմման ամսաթվով Բանկի կողմից ձեռք բերվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գնահատումը և ձեռնարկատիրական գործունեության միավորման հաշվառումը դեռևս ընթացքում էր, և համապատասխանաբար, ձեռքբերվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները 2017թ.-ի փետրվարի 20-ի դրությամբ Բանկի կողմից որոշվել էին նախնականորեն:

Փաստեր, ցուցանիշներ

+13.0 %	2016 թվականի վերջին ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 149,198.7 մլն. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 13.0 %-ով:
+0.1 %	2016 թվականի վերջին հաճախորդներին տրված վարկերի մեծությունը կազմել է 66,148.9 մլն. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 0.1 %-ով:
+5.9 %	2016 թվականի վերջին բանկի ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է 116,068.1 մլն. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 5.9 %-ով:
+15.7 %	2016 թվականի վերջին զուտ շահույթը կազմել է 1,089.5 մլն. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 15.7 %-ով:
+47.4 %	2016 թվականի վերջին բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմել է 33,130.6 մլն. ՀՀ դրամ, որը 2015 թվականի համեմատ աճել է 47.4 %-ով:


Ֆինանսական ակնարկ

2016 թվականին միջազգային և ՀՀ մակրոտնտեսական միջավայրերում արձանագրված «թույլ» ցուցանիշների պայմաններում բանկը, օգտագործելով իր կողմից կիրառվող բանկային նորագույն տեխնոլոգիաները, ունենալով արհեստավարժ մասնագետներով հագեցած համախոհների թիմ, ապահովեց իր գործունեության կայունությունն ու հիմնական ցուցանիշների դրական դինամիկան, ինչը վկայում է Բանկի գործունեության կայունության, արդյունավետության և ստեղծված իրավիճակում՝ Բանկի մենեջմենթի կողմից ճիշտ ռազմավարության ընտրության փաստը:


Ակտիվներ

Բանկի ընդհանուր ակտիվները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 149,198,687 հազ. ՀՀ դրամ՝ 2015թ. նույն ժամանակահատվածի (132,027,472 հազ. ՀՀ դրամ) համեմատ աճելով 17,171,215 հազ. ՀՀ դրամով կամ 13.0%-ով: Հաշվետու տարում բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված էր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների 6,777,771 հազ. ՀՀ դրամ կամ 104.3% և վաճառքի համար մատչելի արժեթղթերի 11,757,243 հազ. ՀՀ դրամ կամ 77.6% աճով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ դեռևս շարունակվող մակրոտնտեսական «թույլ» ցուցանիշների պայմաններում 2016 թվականին 2015 թվականի համեմատ աճել են նաև հաճախորդներին տրամադրված վարկերը 65,820 հազ. ՀՀ դրամով կամ 0.1%-ով՝ տարվա վերջի դրությամբ կազմելով 66,148,947 հազ. ՀՀ դրամ: Ակտիվների աճին զուգահեռ տեղի է ունեցել նաև ակտիվների կառուցվածքի դրական փոփոխություն, մասնավորապես ընդհանուր ակտիվներում նախորդ տարվա համեմատ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն աճել է 4.82 տոկոսային կետով և կազմել՝ 71.26%

Ստորև բերված գծապատկերներում ներկայացված են նախորդ տասը տարիների ընթացքում արձանագրված ակտիվների փոփոխությունը և հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների կառուցվածքը:



Ակտիվների կառուցվածքը հաշվետու տարվա վերջին




Վարկեր

2016 թ. դեկտեմբերի 31-ին հանախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 66,148,947 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0.1%-ով կամ 65,820 հազ. ՀՀ դրամով: Վարկավորման նման ցուցանիշը պայմանավորված էր վարկերի նկատմամբ առողջ պահանջարկի անկմամբ և ՀՀ տնտեսության զարգացման ցիկի ներկա փուլում կոնսերվատիվ վարկային քաղաքականություն վարելու անհրաժեշտությամբ:


Նախորդ ֆինանսական տարվա համեմատ 2016թ.-ին ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալն աճել է 2.3%-ով կամ 450,599 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 19,935,283 հազ. ՀՀ դրամ, անհատ ձեռնարկատերերին տրված վարկերի ծավալը նվազել է 16.4%-ով կամ 1,544,136 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 7,847,766 հազ. ՀՀ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալն աճել է 3.3%-ով կամ 1,260,951 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 39,597,013 հազ. ՀՀ դրամ:

Վերջին տասը տարիների ընթացքում վարկային պորտֆելի փոփոխման դինամիկան պատկերված է ստորև բերված գծապատկերում:

Հանախորդներին տրված վարկեր (հազ. ՀՀ դրամ)




2016թ. վերջի դրությամբ բանկի վարկային պորտֆելի կառուցվածքը, ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.



Հաշվետու տարում բանկը կարևորելով մանրածախ վարկավորման ոլորտը, իրականացրել է մի շարք միջոցառումներ տրամադրվող վարկերի ծավալներն ավելացնելու, վարկավորման պայմանները բարելավելու և վարկավորման գործընթացները կանոնակարգելու ուղղությամբ:

2016թ. վերջի դրությամբ մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Միջազգային վարկային ծրագրեր

Բանկի ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը:

2016 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, Բանկը կնքեց 5 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր BlueOrchard Microfinance Fund կազմակերպության հետ և 5 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր Black Sea Trade and Development Bank (BSTDB) կազմակերպության հետ՝ Հայաստանում փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման նպատակով:


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի հետ համագործակցող և գործընկեր միջազգային կառույցների շարքում են նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ/EBRD), Վերականգնման վարկային հաստատությունը (KFW), Համաշխարհային բանկը (WB), Ասիական զարգացման բանկը (ADB), Հարավ-արևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամը (EFSE), FMO նիդերլանդական ֆինանսական կազմակերպությունը, The OPEC Fund for International Development (OFID) ֆինանսական կազմակերպությունը, DEG DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH կազմակերպությունը, responsAbility Investments AG կազմակերպությունը:

2016 թվականին Բանկը շարունակեց փաստաթղթային գործիքների թողարկումը և կարճաժամկետ վերականգնվող վարկերի տրամադրումը՝ ուղղված ներուժման և արտահանման գործարքների ֆինանսավորմանը՝ արձանագրելով կնքված վերականգնվող վարկային պայմանագրերի քանակի աճ՝ 6%-ի չափով նախորդ տարվա համեմատ:

Արժեթղթեր

2016 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, իր ներդրումային քաղաքականության շրջանակում շարունակեց ակտիվ գործունեություն ծավալել նաև արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ արժեթղթերում բանկի ներդրումային պորտֆելը կազմեց 26,901,944 հազ. ՀՀ դրամ, որտեղ 96.95%-ը կազմում են ՀՀ պետական պարտատոմսերը, 2.84%-ը՝ ոչ պետական պարտատոմսերը, իսկ 0.21%-ը՝ կորպորատիվ բաժնետոմսերը:



2016 թվականին բանկի կողմից ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկայում կատարված գործառնությունների ծավալը կազմեց 66,287,124 հազ. ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ 141,396,126 հազ. ՀՀ դրամ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված եկամուտները, որոնց մեջ ավելի քան 97%-ը կազմում են պետական պարտատոմսերը, կազմել են 2,213,745 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 799,281 հազ. ՀՀ դրամով կամ 56.51 %-ով:

Արդյունքում «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից կազմակերպված «Լավագույն անդամ» տարեկան մրցանակաբաշխության ժամանակ բանկը 2016 թվականի գործունեության արդյունքներով հինգերորդ անգամ արժանացավ «Բորսայի լավագույն անդամ»՝ պետական պարտատոմսերի շուկայում մրցանակին:

Բանկի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն կարևորելով տնտեսության ֆինանսական հատվածում արժեթղթերի և կապիտալի զարգացած շուկա ունենալու դերը և նշանակությունը՝ շարունակեց իր ներդրումն ունենալ արժեթղթերի շուկայի ակտիվացման և զարգացման գործում:

2016 թվականի ընթացքում բանկը թողարկեց և ամբողջությամբ տեղաբաշխեց.

- 1 մլն. ԱՄՆ դոլարի՝ 40 հազ. հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 7.0% եկամտաբերությամբ, 3 տարի մարման ժամկետով, չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

- 400 մլն. ՀՀ դրամ՝ 40 հազ. հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 13.0% եկամտաբերությամբ, 2 տարի մարման ժամկետով, չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

- 1 մլն. ԱՄՆ դոլարի՝ 40 հազ. հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 6.5% եկամտաբերությամբ, 2 տարի մարման ժամկետով, չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

Ընդ որում, նշված դոլարային պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը կատարվել է նվազեցված 2.25% դրույքաչափով՝ ներկայում գործող արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց ՀՀ դրամով կատարվող պահուստավորման 18% դրույքաչափի փոխարեն, իսկ դրամային պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը կատարվել է նվազեցված 0.0% դրույքաչափով՝ ներկայում գործող դրամով ներգրավված միջոցների դիմաց կատարվող պահուստավորման 2% դրույքաչափի փոխարեն:

2016 թվականի վերջի դրությամբ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կորպորատիվ պարտատոմսերի երկրորդային՝ Bbond հարթակում գնանշվել են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ թողարկման, ընդհանուր 7 մլն. ԱՄՆ դոլար և 12-րդ թողարկման 400 մլն. ՀՀ դրամ անվանական արժեքով կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

2016 թվականի ընթացքում պարտատոմսերի երկրորդային շուկայում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկված կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերով իրականացվել է 145 գործարք, ընդհանուր 1,318 հազ. ԱՄՆ դոլար և 21 մլն. ՀՀ դրամ շրջանառության ծավալով:

Հաշվետու տարվա վերջում թողարկված պարտատոմսերի դիմաց բանկի պարտավորությունը կազմեց 3,812,886 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 14.7%-ով կամ 489,405 հազ. ՀՀ դրամով:

Արտարժույթի առքուվաճառքի գործառնություններ

Տարվա ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ակտիվ գործունեություն ծավալեց արտարժույթային գործառնություններում: Արտարժույթային գործառնությունների ծավալներն՝ ըստ արտարժույթների, կազմեցին.

- ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 556,017 հազ. ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ նվազելով 23.31%-ով,
- ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 28,971,337 հազ. ՌԴ ռուբլի, նախորդ տարվա համեմատ աճելով 37.03%-ով,
- Եվրոյով գործարքների ծավալը՝ 200,244 հազ. եվրո, նախորդ տարվա համեմատ աճելով 22.92%-ով:

Բանկում ներդրված՝ հաճախորդներին արտարժույթի առքուվաճառքի հնարավորություն տվող ԱՐԱՐԱՏԴԻԼԻՆԳ արտարժույթային առևտրային հարթակի միջոցով ընթացիկ տարում իրականացվեցին ավելի քան 7,288 հազ. ԱՄՆ դոլարի ծավալով գործարքներ:

Բանկի որդեգրած՝ դեպի հաճախորդն ուղղված քաղաքականության ներքո բանկը շարունակեց մրցակցային գնանշումներ իրականացնել արտարժույթային շուկայում: Նման մոտեցման արդյունքում հաճախորդներ հանդիսացան և առաջարկված ծառայություններից օգտվեցին նաև այլ առևտրային բանկեր: 2016 թվականին արտարժույթի առքուվաճառքից ստացված զուտ եկամուտը կազմեց 696,994 հազ. ՀՀ դրամ:

Միջբանկային վարկեր

Ելնելով ստեղծված աշխարհաքաղաքական զարգացումներից, ՀՀ տնտեսությունում սպասվող համակարգային բարձր ռիսկերից՝ Բանկը որդեգրեց միջոցների տեղաբաշխման զգուշավոր քաղաքականություն, ինչը հնարավորություն տվեց բանկին միջոցները տեղաբաշխել առավել ցածր ռիսկային և բարձր իրացվելի գործիքներում, այդ թվում միջբանկային վարկերում:

Բանկը 2016թ. ընթացքում իրականացրել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկավորում 17,521 մլն. ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով:

Պարտավորություններ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի պարտավորությունները կազմել են 116,068,075 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.9%-ով կամ 6,512,184 հազ. ՀՀ դրամով:

Հաշվետու տարում բանկի պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված էր բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 6.4% կամ 2,781,542 հազ. ՀՀ դրամ, հաճախորդների նկատմամբ պարտավորությունների՝ 4.6% կամ 2,855,657 հազ. ՀՀ


դրամ և բանկի կողմից թողարկված արժեթղթերի՝ 14.7% կամ 489,405 հազ. ՀՀ դրամ աճով: Տարեվերջին բանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 39,658,072 հազ. ՀՀ դրամ կամ պարտավորությունների 34.2%-ը, ինչը փաստում է, որ բանկի համար առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը:

Պարտավորությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները՝ 59.4% կամ 68,946,744 հազ. ՀՀ դրամ, որոնք իրենց մեջ ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները, ՀՀ կառավարության և տեղական ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվները, ավանդները և փոխառությունները:

Ընդ որում հաճախորդների ընթացիկ հաշիվներում և ավանդներում նախորդ ֆինանսական տարվա համեմատ զգալիորեն ավելացել են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները՝ համապատասխանաբար 13.6 և 51.0%-ով կամ 2,648,415 հազ. և 1,860,245 հազ. ՀՀ դրամով և ֆիզիկական անձանցից ներգրավված ցպահանջ ավանդները՝ 13.0%-ով կամ 1,543,670 հազ. ՀՀ դրամով:

Պարտավորությունների կազմում զգալիորեն աճել են նաև բանկի կողմից թողարկված արժեթղթերով ներգրավված միջոցները՝ 14.7%-ով կամ 489,405 հազ. ՀՀ դրամով՝ տարվա վերջի դրությամբ կազմելով 3,812,886 հազ. ՀՀ դրամ կամ Պարտավորությունների 3.3%-ը:


Բանկի ընդհանուր պարտավորությունների դինամիկան վերջին տասը տարիների ընթացքում պատկերված է ստորև:



Սեփական կապիտալ


Հաշվետու ֆինանսական տարվա վերջի դրությամբ բանկի սեփական կապիտալը կազմել է 33,130,612 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 10,659,031 հազ. ՀՀ դրամով կամ 47.4%-ով: Սեփական կապիտալի աճը ոչ միայն պայմանավորված է հաշվետու տարվա ընթացքում ձևավորված շահույթի և Վերագնահատման պահուստների աճով, այլ նաև Կանոնադրական կապիտալի 8,500,016 հազ. ՀՀ դրամ համալրմամբ, որի արդյունքում Բանկի Կանոնադրական կապիտալն ավելացել է 2,416,150 հազ. ՀՀ դրամով կամ 37.8%-ով, իսկ Էմիսիոն եկամուտն ավելացել է 6,083,865 հազ. ՀՀ դրամով կամ 312.3%-ով:

Ստորև բերված գծապատկերում արտացոլված է սեփական կապիտալի փոփոխությունն ըստ տարիների:



2016 թվականին կապիտալի աճի արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 18,816 ՀՀ դրամ՝ 2015թ.-ի նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 7.0%-ով՝ 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքի պարագայում: Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի դինամիկան տարիների ընթացքում պատկերված է ստորև բերված գծապատկերում:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի դինամիկան, հազ. ՀՀ դրամ



Եկամուտներ և ծախսեր

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 10,775,508 հազ. ՀՀ դրամ՝ աճելով 5.2%-ով կամ 536,035 հազ. ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված տոկոսային եկամուտների՝ 515,538 հազ. ՀՀ դրամ կամ 36.4% և հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացված տոկոսային եկամուտների՝ 235,960 հազ. ՀՀ դրամ կամ 72.9% աճով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճին զուգահեռ տեղի է ունեցել նաև Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքի դրական փոփոխություն, մասնավորապես ընդհանուր տոկոսային եկամուտներում հաճախորդներին տրամադրված վարկերից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 72.8% նախորդ տարվա 78.3%-ի համեմատ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 17.9% նախորդ տարվա 13.8%-ի համեմատ, հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 5.2% նախորդ տարվա 3.2%-ի համեմատ: Արդյունքում 2016 թվականին տոկոսային և նմանատիպ եկամուտներն ունեցել են առավել դիվերսիֆիկացված կառուցվածք:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 5,724,914 հազ. ՀՀ դրամ՝ աճելով 0.9%-ով կամ 49,201 հազ. ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի աճի ցածր տեմպը պայմանավորված է հետզնման պայմանագրերի գծով վճարված տոկոսային ծախսերի էական նվազմամբ՝ 551,015 հազ. ՀՀ դրամի կամ 91.2%-ի չափով: Միևնույն ժամանակ Տոկոսային և նմանատիպ ծախսերի աճը պայմանավորված է հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 299,452 հազ. ՀՀ դրամ կամ 14.0%, այլ փոխառությունների դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 203,246 հազ. ՀՀ դրամ կամ 7.8%, բանկերից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 35,279 հազ. ՀՀ դրամ կամ 31.4% և բանկի կողմից թողարկված պարտատոմսերի դիմաց վճարված տոկոսային ծախսերի՝ 62,239 հազ. ՀՀ դրամ կամ 30.1% ավելացմամբ:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի համեմատ Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճի առաջանցիկ տեմպի արդյունքում 2016 թվականին ավելացել են բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները 486,834 հազ. ՀՀ դրամով կամ 10.7%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 1,049,827 հազ. ՀՀ դրամ՝ աճելով 4.7%-ով կամ 47,554 հազ. ՀՀ դրամով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է վճարահաշվարկային ծառայություններից ստացված կոմիսիոն եկամուտների՝ 18,190 հազ. ՀՀ դրամ կամ 2.7% և պլաստիկ քարտերի սպասարկումից ստացված կոմիսիոն եկամուտների՝ 28,881 հազ. ՀՀ դրամ կամ 9.4% աճով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 558,934 հազ. ՀՀ դրամ՝ աճելով 13.3%-ով կամ 65,606 հազ. ՀՀ դրամով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է պլաստիկ քարտերով իրականացված գործառնությունների համար վճարված կոմիսիոն վճարների՝ 61,226 հազ. ՀՀ դրամ կամ 15.6% և վճարահաշվարկային ծառայությունների դիմաց վճարված կոմիսիոն վճարների՝ 7,514 հազ. ՀՀ դրամ կամ 11.8% աճով:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների համեմատ Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերի աճի առաջանցիկ տեմպի արդյունքում 2016 թվականին նվազել են բանկի կողմից ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները 18,052 հազ. ՀՀ դրամով կամ 3.5%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում մասնաճյուղային ցանցի ընդլայնման և բանկի աշխատողների թվաքանակի ավելացման, ինչպես նաև բանկի աշխատողների աշխատավարձերի բարձրացման հետևանքով անձնակազմի գծով կատարված ծախսերը կազմել են 2,313,515 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 3.5%-ով կամ 78,994 հազ. ՀՀ դրամով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է բանկի եկամուտների և ծախսերի դինամիկան նախորդ երկու տարիների կտրվածքով

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	10,775,508	10,239,473
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(5,724,914)	(5,675,713)
Զուտ տոկոսային եկամուտներ	5,050,594	4,563,760
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,049,827	1,002,273
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(558,934)	(493,328)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտներ	490,893	508,945
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	206,214	(40,262)
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից	447,979	781,483
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	309,293	22,797
Այլ գործառնական եկամուտ/(ծախս)	321,775	494,793
Արժեզրկումից կորուստներ	(1,265,280)	(960,703)
Անձնակազմի գծով ծախսեր	(2,313,515)	(2,234,521)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,867,144)	(1,897,056)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	1,380,809	1,239,236
Շահութահարկի գծով ծախս	(291,334)	(297,555)
Տարվա շահույթ	1,089,475	941,681

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ

Շահութաբերության գործակիցներ և շահաբաժիններ

Հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 1,089,475 հազ. ՀՀ դրամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)' 4.45%,

Ակտիվների շահութաբերություն (ROA)' 0.79%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 815 ՀՀ դրամ:

Բանկի մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը տարեվերջի դրությամբ կազմել է 18,816 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 5,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է 23.09:

2016 թվականին 2015 թվականի 941,681 հազ. ՀՀ դրամ շահույթից շահաբաժիններ չեն վճարվել: Կուտակված շահույթից 1,200,000 հազ. ՀՀ դրամ ուղղվել է պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ մնացած շահույթը՝ որպես չբաշխված շահույթ մնացել է բանկում՝ նպաստելով կապիտալի աճին: Բանկի կողմից շահաբաժիններ չվճարելու որոշման կայացումը պայմանավորված է ՀՀ ԿԲ-ի կողմից 2017 թվականի հունվարի մեկից ՀՀ առևտրային բանկերի համար սահմանված նվազագույնը 30 մլրդ. ՀՀ դրամ նորմատիվային կապիտալի ապահովման պահանջով:

Ներքին հսկողական համակարգ

Ներքին հսկողության համակարգը բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է:

Բանկի ներքին հսկողության համակարգի գլխավոր նպատակը բանկի գործունեության ու որոշումների կայացման գործընթացների նկատմամբ արդյունավետ հսկողության ապահովումն է:

Այդ, իսկ նպատակով բանկում ներդրված է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ և հսկողական գործառույթներ, այդ թվում՝ ռիսկերի գնահատման հիման վրա բանկի Ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, աուդիտի իրականացման և հետստուգումային հսկողության (Follow up) գործառույթ:

Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան բանկում ներդրված Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Նշվածի ներքո հաշվետու տարվա ընթացքում Ներքին աուդիտի կողմից՝ Տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն իրականացվել են ռիսկերի վրա հիմնված բանկի տարբեր գործարար գործընթացների, տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համալիր ու նպատակային թվով 65 ստուգումներ և ուսումնասիրություններ:

Ստուգումների և ուսումնասիրությունների նպատակն է եղել Ներքին աուդիտի կողմից գնահատելու բանկում ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը:

Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Վճարահաշվարկային գործառնություններ

Բանկը հաճախորդների դրամական փոխանցումների սպասարկման որակը բարձրացնելու և գործընթացը դյուրացնելու նպատակով շարունակել է զարգացնել համագործակցությունը Unistream, MoneyGram, Ria Money Transfer, Anelik, Xpress Money, Intel Express, Sigue և Converse Transfer արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ՝ նորանոր անակնկալներ մատուցելով հաճախորդներին, ինչպես նաև անդամակցել է նոր համակարգի՝ Moneytun արագ դրամական փոխանցումների համակարգին: Արագ դրամական փոխանցումների հետ համագործակցության շրջանակներում, մասնավորապես, 2016 թվականի մարտի 8-ից ապրիլի 7-ը Ria Money Transfer համակարգի հետ համատեղ իրականացվեց ակցիա՝ նվիրված կանանց միամսյակին, որի ավարտին տասը կին հաճախորդներ ստացան նվերներ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի և Ria Money Transfer համակարգի կողմից: Ria Money Transfer համակարգի հետ անցկացված ևս մեկ ակցիայի շրջանակներում 2016 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ը յուրաքանչյուր ամիս պարգևատրվեց Ria Money Transfer համակարգի միջոցով փոխանցում ուղարկած կամ ստացած մեկական հաճախորդ: Ակցիաների արդյունքում Ria Money Transfer համակարգով գործարքների քանակը և ծավալը կրկնապատկվեցին՝ նախորդ տարվա համեմատ: 2016 թվականի ապրիլի 11-ից օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում անց կացվեց Գարուն-Ամառ ակցիա Unistream համակարգի հետ, որի արդյունքներով 5 հաճախորդ ստացան iPhone 6 բջջային հեռախոսներ: Արդյունքում 2016 թվականի ապրիլ-օգոստոս ամիսներին գրանցվել է Unistream համակարգով իրականացված փոխանցումների քանակի աճ 28.41%-ով և ծավալի աճ 29.33%-ով՝ նախորդ ամսվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: Համագործակցության խորացման արդյունքում բանկը հաշվետու տարում կարողացավ հաճախորդներին առաջարկել մատչելի սպասարկման սակագներ՝ շուկայում ապահովելով մրցակցային կայուն դիրքեր: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի մասնաբաժինը հայաստանյան արագ դրամական փոխանցումների շուկայում կազմում է 11%:

Բանկի կողմից առաջարկվող արագ դրամական փոխանցումների տարբեր համակարգերի լայն ընտրության շնորհիվ մեր հաճախորդները ներկայումս հնարավորություն ունեն փոխանցումներ կատարելու և ստանալու փոխանցումներ աշխարհի ցանկացած երկրից, որտեղ գործում են արագ դրամական փոխանցումների համակարգեր:

Արագ դրամական փոխանցումներից օգտվող հաճախորդների շրջանում աճեց նաև բանկի ARARATTRANSFER ակումբի անդամների թիվը: ARARATTRANSFER բոնուսային ծրագրի շրջանակներում միջազգային արագ դրամական փոխանցումներից օգտվող առավել ակտիվ հաճախորդներին առաջարկվում են մի

շարք արտոնություններ, այդ թվում՝ զեղչեր փոխանցումներ իրականացնելիս, անհատական պահատեղերից օգտվելիս, արտոնյալ փոխարժեք և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի քարտապաններին առաջարկվող զեղչային համակարգից օգտվելու հնարավորություն:

Բանկում կիրառվող մրցունակ սակագների և սպասարկման բարձր որակի շնորհիվ հաշվետու տարում գրանցվել է SWIFT համակարգով փոխանցումների աճ ավելի քան 12%-ով՝ նախորդ տարվա համեմատ, ներգրավվել են նոր հաճախորդներ:

Պլաստիկ քարտեր


Ընթացիկ տարում բանկն ակտիվորեն շարունակեց միջոցառումները բանկային համակարգում պլաստիկ քարտերի թողարկման ծավալների ավելացման, ձեռք բերված դիրքերի պահպանման և ամրապնդման, քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների վերաբերյալ հանրությանը տեղեկացման լայնածավալ աշխատանքները: Արդյունքում բանկն արձանագրեց վճարային քարտերի ցուցանիշների կայուն աճ, ինչը պայմանավորվեց բանկի կողմից իրականացված մի շարք միջոցառումներով, մասնավորապես՝

➤ 2016 թվականին ընդլայնվեց բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը՝ հասնելով 1,273-ի:


➤ Զեղծարարությունների զսպման նպատակով իրականացվեցին մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ “AntiSceamer” ծրագրի ներդնում բանկումատներում, չիպային քարտերի քանակի աճ և այլն:

➤ Զարգացվեց և ընդլայնվեց քարտերի սպասարկման ենթակառուցվածքը: Հաշվետու տարվա վերջի դրությամբ ավտոմատ գանձման մեքենաների քանակը կազմեց 98 հատ, POS տերմինալների քանակը՝ 485 հատ:

➤ 2016թ.-ի վերջի դրությամբ բանկի թողարկված վճարային քարտերի կառուցվածքը՝ ըստ վճարային համակարգերի, ներկայացվում է ստորև.



Բանկը, թողարկած քարտերի քանակով, ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և նորարար ծրագրերի իրականացմամբ: 2015թ.-ի համեմատ 2016թ.-ին թողարկված քարտերի քանակն աճել է 1,818 հատով կամ 1.4%-ով և կազմել 134,851 հատ:



Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ինտեգրումը, էլեկտրոնային առևտրի ծավալների շարունակական աճը, անկանխիկ գործառնությունների տարածումը՝ բանկն առանձնակի կարևոր է համարում շարունակաբար ավելացնել միջազգային պլաստիկ քարտերի (Visa, MasterCard) թողարկման ծավալները, ինչպես նաև օգտագործելով բանկի՝ Հայաստանում Diners Club միջազգային վճարային համակարգի բացառիկ ներկայացուցիչը լինելու հանգամանքը, բանկը շարունակելու է իրականացնել բազմատեսակ ծրագրեր՝ հանրությանն առավելագույնս իրազեկում Diners Club քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների մասին:

Մեր աշխատողները

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ գործունեության հաջողությունը պայմանավորված է աշխատողների բարեխիղճ ու նպատակասլաց աշխատանքով, ուստի բանկը մշտապես արժևորում է յուրաքանչյուր աշխատողի ներդրումը բանկի զարգացման գործում:

Կարևորելով աշխատողների մասնագիտական և անձնական զարգացումը՝ բանկն աշխատողների համար ստեղծում է հավասար հնարավորություններ յուրաքանչյուր աշխատողի ներդրման արդարացի գնահատման, նախաձեռնության խթանման, թիմի ձևավորման համար: Բանկի ղեկավարությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործման, առաջխաղացման և մոտիվացման գործընթացին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2016 թվականի ընթացքում, բանկի ղեկավարությունն իր ուշադրության ներքո է պահել անձնակազմի մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը, մոտիվացմանը (խրախուսման, առաջխաղացման և այլն) վերաբերող ցանկացած հարց:

ՀՀ բանկային համակարգում մրցունակ անձնակազմ ձևավորելու նպատակով բանկը պարբերաբար վերանայում է անձնակազմի բնագավառը կարգավորող ներքին իրավական ակտերը, որոնցով ներդրվում են միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված անձնակազմի հավաքագրման, մրցույթների կազմակերպման, վերապատրաստման և ատեստավորման համակարգեր: Նշված համակարգերը նպաստում են աշխատողների վերաբերյալ ընդունվող ցանկացած որոշման արդարության և թափանցիկության մակարդակի բարձրացմանը:

Բանկի ղեկավարությունը, գնահատելով աշխատողների մոտիվացման կարևորությունը, 2016թ. ընթացքում շարունակեց իր լավագույն աշխատողների հրապարակային խրախուսման և մոտիվացման միջոցառումները:

Բանկում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև նոր ընդունվող աշխատողների մասնագիտական բարձր պատրաստվածությանը և նրանց համապատասխանությանը բանկի ներքին բիզնես մշակույթին:

Բանկում, հաշվի առնելով անձնակազմի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման անհրաժեշտությունը, հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել են բանկի կողմից մատուցվող ծառայությունների, սպասարկման որակի կատարելագործման, փողերի լվացման և ահաբեկչության կանխարգելման, կազմակերպությունների վարկունակության գնահատման, ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության, ներդրվող նոր ծառայությունների վերաբերյալ սեմինար պարապմունքներ:

Այս ամենի արդյունքում բանկի ամբողջ անձնակազմը պատրաստակամություն է ցուցաբերում բանկի ղեկավարության կողմից առաջ քաշված խնդիրների կարգավորման, սահմանված նպատակների իրականացման, ինչպես նաև բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ թիրախների ապահովման գործում:

Բանկի աշխատողի կերպարի հիմնական բնութագրիչ է դիտվում մասնագիտական գիտելիքների, ունակությունների, համապատասխան որակների և գործարար վարվելակերպի համարժեք զուգակցումը:

Բանկը, պահպանելով կառավարման դասական գործընթացները, միաժամանակ ներմուծում է կառավարման այնպիսի մոդելներ, որոնք նպատակաուղղված են կոլեկտիվի համախմբմանը՝ նրա նպատակների ու խնդիրների իրականացման գործում:

Անձնակազմի կառավարման գործառնություններում մեծացել է Balanced Scorecard /BSC/ կամ ցուցանիշների հաշվեկշռված համակարգի /ՑՀՀ/ ներդրման դերը, այն իրենից ներկայացնում է բանկի աշխատողների թիրախային ցուցանիշների սահմանում և կանոնակարգում ինչպես առանձին աշխատողների, այնպես էլ ստորաբաժանումների մակարդակով:

Չնայած այն հանգամանքին, որ անձնակազմի համալրման և վարչական հարցերը շատ ժամանակատար են, սակայն բանկի անձնակազմի կառավարման քաղաքականությունում առանձնակի կարևորություն և ուշադրություն է դարձվում տաղանդների կառավարմանը, թիմի մոտիվացմանը, բանկին բնորոշ արժեքների համակարգի և կորպորատիվ մշակույթի ձևավորմանը:

2016 թվականի դրությամբ բանկի աշխատողների միջին թիվը կազմել է 688 մարդ:

Տարածքային գործունեություն

Բանկը, մշտապես առաջնորդվելով իր հաճախորդի կողքին լինելու, խորհրդատվություն տրամադրելու, արդյունավետ և օպտիմալ լուծումներ առաջարկելու, գործունեության աշխարհագրության շարունակական ընդլայնման և զարգացման քաղաքականությամբ, 2016 թվականի ընթացքում շարունակեց իր տարածքների ընդլայնման քաղաքականությունը, որի արդյունքում Բանկն ավելացրեց իր մասնաճյուղային ցանցը թվով 4 նոր մասնաճյուղերով՝ մասնաճյուղերի

թիվը հասցնելով 55-ի, ինչպես նաև իրականացվեցին մի շարք մասնաճյուղերի արդիականացման ծրագրեր: «Զարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու արդյունքում Բանկի մասնաճյուղային ցանցն ընդլայնվեց թվով 10 նոր մասնաճյուղերով՝ ՀՀ բանկային համակարգում մասնաճյուղային ցանցի մեծությամբ դառնալով երրորդ խոշորագույն բանկը:

2016 թվականի ընթացքում Բանկի գործող մասնաճյուղերում, կադրերի որակավորման բարձրացման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման նպատակով, միջոցներ են հատկացվել մի շարք մասնաճյուղերի կապիտալ վերանորոգման և տեխնիկական վերազինման համար, որի արդյունքում բարելավվել են Բանկի աշխատակազմի աշխատանքային, ինչպես նաև հաճախորդների սպասարկման պայմանները, նվազել է մեկ գործառույթի և մեկ հաճախորդի սպասարկման ժամանակի տևողությունը: Մասնաճյուղերում կադրերի որակավորման նպատակով՝ յուրաքանչյուր ամիս Բանկի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներ իրականացրել են համապատասխան սեմինար պարապմունքներ:

Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով ընդլայնել Բանկի գործունեության աշխարհագրությունը և մոտեցնել Բանկի սպասարկումն ու ծառայությունները հաճախորդների առավել լայն զանգվածի:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	2016 թվական	2015 թվական
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,089,475	941,681
Սեփական կապիտալի միջին մեծություն	24,484,418	21,974,242
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	4.45	4.29
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,089,475	941,681
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	138,374,261	131,451,219
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.79	0.72
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,089,475	941,681
Գործառնական եկամուտ	6,826,748	6,331,516
Զուտ շահույթի մարժա (NPM), %	15.96	14.87
Գործառնական եկամուտ	6,826,748	6,331,516
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	138,374,261	131,451,219
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	4.93	4.82
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	138,374,261	131,451,219
Սեփական կապիտալի միջին մեծություն	24,484,418	21,974,242
Սեփական կապիտալի մոլտիպլիկատոր (EM)	5.65	5.98
Զուտ տոկոսային եկամուտ	5,050,594	4,563,760
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	95,632,874	77,520,328
Զուտ տոկոսային մարժա (NIM)	5.28	5.89
Տոկոսային եկամուտ	10,775,508	10,239,473
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	95,632,874	77,520,328
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	11.27	13.21
Տոկոսային ծախսեր	5,724,914	5,675,713

Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	88,426,284	64,874,295
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	6.47	8.75
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,089,475	941,681
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	1,337.08	1,277.501
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	814.82	737.13
Սպրեդ, %	4.79	4.46

Բանկի հետագա զարգացման նկարագիրը

Բանկի հեռանկարային զարգացման խնդիրները նպատակաուղղված են լինելու ձեռք բերված դրական միտումների շարունակականության ապահովմանը: Բանկն առաջնահերթ կարևորում է հաճախորդների հետ փոխշահավետ համագործակցության պահպանումն ու ընդլայնումը: Այդ նպատակով՝ Բանկն առավել մատչելի կդարձնի մատուցվող սպասարկումներն ու ծառայությունները՝ հաճախորդներին առաջարկելով ֆինանսական ծառայությունների բավարարման ամբողջական փաթեթային լուծումներ:

Բանկի զարգացման կարևոր բաղադրիչներից է միջազգային գործընկեր ֆինանսական կառույցների հետ համագործակցության ընդլայնումը՝ նպատակ ունենալով ապահովելու բանկային ծառայությունների և սպասարկումների որակի համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին և բանկային ինովացիոն պրոդուկտների ներդրումն ու Բանկի մրցունակության մակարդակի բարձրացումը:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Բանկի առջև դրված նպատակներով և դիտարկվում են գործունեության որակական բնութագրիչներով ու ֆինանսատնտեսական ցուցանիշների աճի մակարդակով: Հիմնական խնդիրների շարքում կարևորվում են.

- ✦ «Զարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ ինտեգրման գործընթացի արագ և արդյունավետ իրականացումը:
- ✦ Մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացումը:
- ✦ Ներդրումային բանկային ծառայությունների ստեղծումը և զարգացումը (Investment banking):
- ✦ Թվային բանկային ծառայությունների ստեղծումը և զարգացումը (Digital banking):
- ✦ Անձնակազմի կառավարման քաղաքականության ներքո համապատասխան ներքին իրավական ակտերի մշակումը և ներդրումը:
- ✦ Կառավարման ապակենտրոնացումը:
- ✦ Բիզնես գործընթացների արդյունավետության բարձրացումը:
- ✦ Դեպի ծառայություններ միտված (product oriented) վարչակազմա-կերպական կառուցվածքից անցում դեպի հաճախորդներին միտված (client oriented) կառուցվածքը:
- ✦ Ոչ տոկոսային եկամուտների աճի ապահովումը:
- ✦ Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի (CRM) զարգացումը:
- ✦ Բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխման իրականացումը (IPO):
- ✦ Բանկի ձեռքբերումը կամ միաձուլումը:

Ֆինանսատնտեսական ցուցանիշների մասով՝ Բանկը կանխատեսում է ապահովել.

- ✦ Բանկի ընդհանուր ակտիվների աճ,
- ✦ ընդհանուր կապիտալի աճ,

- միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների շարունակական աճ,
- վարկային պորտֆելի դվերսիֆիկացիա և ապակենտրոնացում,
- ոչ տոկոսային եկամուտներ գեներացնող ծառայությունների աճ,

Արդյունքում, վերը բերված ցուցանիշների աճի պայմաններում կարճանազրվի նաև զուտ շահույթի աճ: